

եւ զպարզամտաց. յոմանց զմարդարիտն թա-
քուցանելով եւ ոչ առ ոտն ձգելով եւ ոմանց
իբր արժանաւորաց զնեքքին հոգին մտաց առակին
արտայայտելով: Թողում ասել զծայրագոյն գա-
գաթանն Աստուածաբանից եւ զերկնայնոյ
գրախտին սրասլաց արծւոյ զսրբոյն Դիոնէոսէ, որ
գրեթէ երկնայինսն երկրաւորօք ապացուցական
այլաբանութեամբք պատկերադրեաց. եւ ոյք
անպատշաճն վարկանէին զերկնայինսն երկրա-
ւորօք նկարագրել, ընդդէմ այնպիսեացն զտարա-
լուծական եղանակս ի ձեռին առեալ՝ ասաց Առաջին
Գրգոջ Ե. Գլ. եւ յերրորդ Բնաբանին. իսկ
եթէ զանպատշաճ պատկերադրութիւնս եպերեսցէ
ոք, ամօթալիս գոլ ասելով զայսպիսի վատթար
կերպարանսն ի վերայ աստուածատեսականն եւ
սրբոց զարդույ, բաւական է ասել առ այնպիսին
թէ կրկին է խորհրդական յայտնաբանութեան
եղանակ. մին՝ որ վայելչաբար ի ձեռն նմանեացն
սրբազնատիպ պատկերաց գայ յառաջ. իսկ միւսն՝
որ ի ձեռն աննման կերպաւորութեանցն յամենեւին.
աննմանութիւն եւ ի տարաձայնութիւն եղծանին
որպէս եւ զպաշտելի աստուածպետութեան
երանութիւն յայտնաբանական ասացելոցն խոր-
հրդական աւանդութիւնքն, երբեմն որպէս բան, որ-
պէս միտ եւ էութիւն օրհնաբանեն զաստուածա-
վայելուչ բնաւորութիւնսն եւ զիմաստութիւն
նորա յայտնելով: Եւ էապէս գոլ գոյութիւն
եւ էիցն գոյութեան պատճառ ճշմարիտ, եւ որպէս
զլոյս՝ զնա վերաստեղծուն եւ կեանս կոչեն. եւ
թէպէտ այսօրիկ պարկեշտագոյնք եւս են քան
զնիւթեղէն կերպաւորութիւնս եւ վերագոյնք
կերպիւ ինչ գոլ թուին, սակայն եւ այնպէս
նուազին ի ճշմարիտ նմանութենէ աստուած-
պետութեան. քանզի գերագոյն քան զամենայն
էութիւն եւ կեանս է եւ ոչ մի լոյս կարէ զնա
ճշգրտել եւ ամենայն բան եւ կեանք ի նմանու-